ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Հայկ Հարությունյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Թուրքմենստան, ք. Աշխաբադ, 2017թ. նոյեմբերի 27-29-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Միջազգային էներգետիկ խարտիայի քարտուղարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Միջազգային էներգետիկ խարտիայի համաժողովի 28-րդ հանդիպմանը և «Ապագայի կայուն էներգիայի համար ներդրումների մոբիլիզացում և փոխադրման երթուղիների դիվերսիֆիկացում» խորագրով նախարարական հանդիպմանը մասնակցելու համար

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Միջազգային էներգետիկ խարտիայի 2016թ. գործունեության արդյունքները, լսվեցին քարտուղարության բյուջետային կոմիտեի, ռազմավարության, իրագործման խմբերի զեկույցները, քարտուղարության կողմից պատրաստված էներգետիկայի ոլորտի ներդրումների ռիսկերի գնահատման զեկույցը: Քննարկվեցին Էներգետիկ խարտիայի պայմանագիրն արդիականացնելու հետ կապված հարցեր:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հայկ Հարությունյանը հանդիպումներ է ունեցել Թուրքմենստանի փոխվարչապետերի, Թուրքմենստանի էներգետիկայի նախարարի, Միջազգային էներգետիկ խարտիայի գլխավոր քարտուղարի, ինչպես նաև համաժողովին մասնակցող մի շարք մասնավոր ընկերությունների ներկայացուցիչների հետ: Քննարկվել են երկկողմ և բազմակողմ համագործակցության սերտացմանն առնչվող մի շարք հարցեր:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
   Համաժողովի արդյունքներով ընդունվեց Միջազգային էներգետիկ խարտիայի աշխաբադյան հռչակագիրը (կամ հայտարարությունը):

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

2017թ.-ին Միջազգային էներգետիկ խարտիայի քարտուղարությունը Հայաստանի համար պատրաստել էր «Էներգետիկայի ոլորտի ներդրումների ռիսկերի գնահատում» խորագրով զեկույցը: Հաշվի առնելով Միջազգային էներգետիկ խարտիայի քարտուղարության առաջարկությունն՝ ընդարձակել զեկույցի ծևաչափը և թարմացնել 2018թ. համար, առաջարկում ենք շարունակել համագործակցությունը նշված ուղղությամբ:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների
նախարարի տեղակալ Հայկ Արզումանի Հարությունյան